ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԿԱՌՈՒՅՑԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԵՎ ՈՒՇԱԳՐԱՎ ԾԵՍՈՎ ԹԱՂՈՒՄ ԱՐՏԱՇԱՏԻՑ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

80-ական թվականների սկզբին Արտաշատի հարավարևմտյան հարթավայրային հատվածում (նկ. 1) հարթեցումներ կատարելիս, գրեյդերի ծանրությունից ավերվել էր անտիկ բաղնիքի երկրորդ հատակը. մեքենան ընկել էր բացվածքի մեջ՝ քանդելով հիպոկաուստի սյուները: Դրա մասին տեղեկացրել էր գյուղի հովիվը՝ իր հետ բերելով նաև մի քանի սկավառակաձև աղյուս: Սահմանամերձ գոտու (ուղեկալի) մեջ գտնվելու պատճառով մեզ չհաջողվեց այցելել այդ վայրը: Նույն ժամանակ, տան հիմքի լիցքի համար այդ տարածքից բերված քարերի մեջ գտնվեց բնական չափերի մարդու մարմարե արձանի ազդրի մաս (բարձր. 32 սմ)[1], որը պատկանում է մ. թ. ա. Iդ. և, հավանաբար, բերված է եղել Փոքր Ասիայից: Այնտեղ շրջելիս նկատել էինք նաև կրաքարե մի քանի տորաձև խարիսխ և պատի շարի առանձին քարեր:

2003 թ. բաղնիքի գտնվելու վայրը որոշելու նպատակով մանրազնին հետախուզվեց տեղանքը[*]*. գտնվեցին ջարդված քարերով պատերի մնացորդներ, ավերված դամբարաններ: Դրանցից մեկի մոտակայքում գտնվեց բաց դեղնավուն կավից անփույթ պատրաստված, խուլ կանթերով, բաց ջնարակով պատած օծանելիքի մի սրվակ և հետաքրքիր ձևավորումով կարմիր փայլեցրած մեծ, փակ անոթի վերին մասը: Բավականին մեծ տարածքից հավաքվեցին հիպոկաուստի սկավառակաձև և ուղղանկյուն աղյուսներ, ինչպես նաև երկու կոտրված տորաձև խարիսխ, ներմուծված խեցեղենի բազմաթիվ բեկորներ: Այստեղ 2 x 5 մ մակերեսով երկու շուրֆ դրվեց. պեղումների ժամանակ հայտնաբերվեցին մեծ քանակությամբ տարբեր չափերի տեղական և ներմուծված խեցեղեն անոթների բեկորներ, ճրագ, քառանկյուն գլխով փորագիր զարդերով ոսկրե շքասեղ (նկ. 2), ապակե սրվակների կանթեր ու իրանի մասեր: Բաղնիքի շինության հետքերի բացակայության, ժամանակի և միջոցների սղության պատճառով տեղափոխվեցինք սահմանամերձ հարթավայրի հարավարևմտյան հատված: Այստեղ՝ Արաքսից մոտ 100–150 մ հեռավորության վրա, թափված քարերի տակ երևում էին մեկ ուղղության վրա շարված կրաքարե չորս քարի վերին մասեր:*

---

[1] Ж. Д. Х а ч а т р я н. Новые памятники античного искусства из Арташата.— "Вестник общественных наук", 1996, № 1, с. 116, рис. 1.

[*] *Հնագիտական աշխատանքները կատարվում են Իտալիայի Լեչեի համալսարանի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում*



Նկ. 1

Ստուգումները գերազանցեցին մեր սպասելիքները: Թափված տձև քարերը հեռացնելուց հետո, 70 սմ խորության վրա բացվեց կրաքարերի երկրորդ շարքը (երկ. 5 մ): Շարվածքի ուղղությունը արևելքից արևմուտք է: Այսինքն՝ մենք բաց ենք անում ինչ-որ կառույցի հյուսիսային պատի դրսի երեսը: Քարերի ճակատը մշակված է «ռուստիկում» ("рустовка") եղանակով:

Բացված պատը արևմտյան կողմից մնում է ճանապարհի տակ, արևելքում, երկրորդ շարքը ընդհատվում էր, դրանից 1.20 մ խորության վրա բացվում երրորդը: Կառույցի ներսի լիցքի մեջ հայտնաբերվեց ատամնավոր սյան մի բեկոր, որն առայժմ եզակի է Հայաստանում (նկ. 12): Ատամնավոր սյուներ պատկերված են Արտաշատից հայտնաբերված կավե արձանիկների (I–II դդ.) և բրոնզե աստիճանաձև պատվանդանի ատտիկյան խարիսխով սյան վրա, որն ավարտվում է կորնթական խոյակին հաղթական դիրքով կանգնած արծվի արձանիկով: Վերջինիս սյան ներքին կեսը հարթ է, իսկ վերինը՝ ատամնավոր (մ. թ. I դ.): Այսինքն՝ նման սյուներով կառույցներ Արտաշատում եղել են, և կավե ու բրոնզե արձանիկներ կերտող վարպետները վերարտադրել են տարածքում գոյություն ունեցող ճարտարապետական հայտնի ձևերը[2]: Այդ է վկայում նաև նորահայտ ատամնավոր սյան բեկորը:

Երրորդ շարքի ընդհատվելուց հետո (երկ. 9,50 մ), բացեցինք չորրորդը, որը 2,50 մ առաջ դնալով նորից ընդհատվեց (երկ. 12 մ): Պատի այս չորս շարքը արևմտյան հատվածում 65 սմ դուրս է թեքված: Պատճառն այն է, որ մեր օրերում չորրորդ պատն անտաշ քարերով բարձրացրել են իբրև հենապատ, լիցք են արել և կանգնեցրել ծանր տեխնիկա: Այստեղ գրունտային ջրերը բարձր են, իսկ ոչ հեռվից անցնող Արաքսն էլ գարնանը հաճախ վարարելով ափից դուրս է եկել և այս տարածքը մնացել է ջրի տակ, որը ևս նպաստել է պատի վերնամասի դիրքի խախտմանը:

Դեպի արևելք բացվեցին V–VII շարքի քարերը և VIII-ի վերին եզրերը: Մաքրված պատի երկարությունը դարձավ 19,30 մ, ընդհանուր բարձրությունը՝ 4 մ (նկ. 3): Բացվեց պատի անկյան մի մասը: Շարվածքից ու «ծիծեռնակապոչ» կապերից երևում է, որ պատը պետք է թեքվի դեպի հարավ: Վերջինիս վրայի հողի լիցքից դտնվեց բերանքսիվայր ընկած, գրեթե եռանկյունաձև քիվի քանդակազարդ քար: Այն հարդարված է ռելիեֆ ատամնավոր (որից մեկը կոտրված է) և ձվաձև զարդամոտիվներով, որոնցից վեր անցնում է զարդերի վնասված մի շարք (նկ. 8): Գառնիի անտիկ տաճարի (մ. թ. I դ.) բարձրաքանդակները հիշեցնող զարդերով կրաքարերի բեկորներ հայտնաբերվել են միջնաբերդի (II բլուր) հյուսիսային կողմի ուրարտական պարսպի դրսի հողի լիցքից[3]:

---

[2] *Արտաշատ, VIII բլ., 1982, № 120, Անահիտը գահավորակին նստած, կողքին կանգնած մանկան հետ, պատկերված է ատամնավոր սյուներով խորանի մեջ (Ժ. Խաչատրյան, Արծվի տարբեր հորինվածքներով կնքադրոշմներ, գեմաներ և քանդակներ.– ՊՖՀ, 2003, № 2, էջ 165, աղ. III,,,ջ):*

[3] Z. D. Khachatrian. Artaxata Capitale dell' Armenia Antica (II sec.A.C.–IV sec.D.C.). Ai piedi dell'Ararat. Artaxata e l'Armenia Ellenistico-Romana, a cura di Antonio Invernizzi. Torino, 1998, p. 111, fig. 14.

Նկ. 2

Նկ. 4

Նկ. 3



Նկ. 5

Հյուսիսային կողմի հողի լիցքից հայտնաբերվեց կրաշաղախից պատրաստված քառաթև վարդյակներով մի բեկոր, որոնք իրար հետ կապված են աղեղնաձև զարդերով (նկ. 9): Պեղումների ընթացքում այդ խրամատից տարբեր խորության վրա գտնվեցին նման քանդակի մի քանի բեկորներ ևս: Ի հայտ եկավ նաև կիսակլոր, աստիճանաձև մշակումով կրաքարի մի կտոր, որը, հավանաբար, խարսխի մաս է, և կրաքարե քանդակազարդ, ցածր անցումով մշակված կլորություն ունեցող մի այլ բեկոր: Հետաքրքրության արժանի է խճանկարի բեկորը, որը պատրաստված է քարե մանր խորանարդիկներով, երեք դույնի՝ սև, կարմրավուն և կաթնագույն (խամրած): Դրանք ամրացված են կրաշաղախե հիմքի վրա (նկ. 16): Դուրս եկան նաև նարնջադույն, դեղնավուն, կարմրավուն, բաց կանաչավուն որմնանկարի բեկորներ, փայլուն, ողորկ մակերեսով, վալիկով (նկ. 13):

Հողի լիցքից հայտնաբերված նյութերից ուշագրավ են նաև ներմուծված ամֆորայի, ոչ մեծ ամֆորիսկի և այլ անոթների բեկորները, տեղական ձիթաճրագի մասերը, խեցեղեն տարբեր անոթների, սկուտեղի հատակի և շրթի բեկորները: Վերջինիս նստուկը, ի տարբերություն մինչ այժմ հայտնի սկուտեղների, հարդարված է բաց ֆոնի վրա կարմիրով արված ութթևանի լեզվաձև վարդյակով, ներսից անզարդ, կարմիր փայլեցրած: Գտնվեց նաև կարմիր անգոբով պատած բռնակի բեկոր, ինչպես նաև մանրահատիկ կավից պատրաստված փակ անոթի մաս: Քիչ չեն նաև կարասների բեկորները: Ուշագրավ են տարբեր տեսակի չինարարական խեցեղենի նմուշները, 5–6 սմ հաստությամբ կրաշաղախի անհավասար մակերեսով բեկորները, որոնց վրա կպած է ոչ լավ թրծած խոշորահատիկ կավի կարմրավուն զանգված: Դժվար է ասել, թե դրանք որպես ինչ են ծառայել: Հիպոկաուստի սկավառակաձև աղյուսը (տր. 20–21 սմ, հաստ. 5 սմ), հաստ կողերով գլանաձև հենակի մասը, տարբեր հաստության (4–6 սմ), մեծության ու որակի ամբողջական աղյուսը և գրա բեկորները բնորոշ են բաղնիքներին (նկ. 16): Հիպոկաուստի ուղղանկյուն խողովակների նեղ ճակատներին սուր գործիքով կտրած ուղղանկյուն անցքեր կան: Դրանցից մեկի վրա պահպանվել են կրաշաղախի մնացորդները: Գտնված փռված տաշտի բեկորները, ըստ երևույթին, նույնպես պատկանում են բաղնիքին: Գտնվեցին դեպի ներքև թեքված ատամով, առաջին տիպին պատկանող[4] կոտրված, երկու կղմինդր (39,5–46 x 61 սմ, 39–45 x 60 սմ), որոնք դրված էին կողք կողքի երեսնիվայր, շենքի պատին կպած: Դրանք պատկանում են երրորդ տիպին[5] (II–IV դդ.), ինչպես նաև, վերոհիշյալ վալիկով կղմինդրի ներքև թեքված եզրով մի բեկոր և մի կողմում թեք հարթություն ունեցող, Գառնիի տաճարի քարե սոլեննների նման կղմինդրի մի բեկոր[6]: Վերջինս Արտաշատում տարածված տիպերից է, որոնց մի մասի վրա առկա է սկյութական IV լեգեոնի դրոշմը: Այն պատկանում է երկրորդ տիպին և

---

[4] А. Г. К а н е ц я н. Античные черепицы из раскопок Арташата. — "Советская археология", 1984, № 1, с. 183—189, рис. 1 (II—I вв.).

[5] Նույն տեղում, էջ 188, նկ. 8:

[6] Ա. Ա. Ս ա հ ի ն յ ա ն, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը. Երևան, 1983, լուս. 99՝, Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Գառնիի պեղումները ՀՍՍՀ-ում 1981-1982 թթ.— Դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ. Երևան, 1983, էջ 23:

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9

Նկ. 10

Նկ. 11

Նկ. 12

թվագրվում է մ. թ. I–II դդ.[7]: Ուշագրավ է նաև եռակող կալիպտերի բեկորը (I–II դդ.): Արևմտյան և կենտրոնական հատվածում հայտնաբերվեցին նաև դուրգի վրա պատրաստված, հիանալի կավե խողովակներ (նեղացող մասի տր. 10 սմ, լայն մասինը 12–14 սմ):

Կրաքարե պատին ուղղահայաց բացվեց երեք պատ, որոնց հիմքերի խորությունները տարբեր են, արևելյանն ավելի խորն է (նկ. 3): Դրանք կառուցված են ջարդած կարծր քարերով (լայն. 90 սմ, 130 սմ և 120 սմ): Այդ պատերի հեռավորությունը իրարից 560–570 սմ է: Դրանք կառուցվել են վաղ միջնադարում, երբ ավերված է եղել կրաքարերով շինությունը: Անտիկ խեցեղենի հետ խառը դուրս եկան նաև վաղ միջնադարյան խեցեղեն անոթների տարբեր մասեր:

2004 թ. մաքրվեցին Արաքսի, անձրևաջրերի և ձնհալի բերած հյուսիսային պատի խրամատի հողերը. այն լայնացվեց ու խորացվեց: 3,50 մ խորության վրա ստորին երեք շարքերի մակարդակին բացվեցին հենապատին կից՝ տարբեր չափերի բազալտի քարերով և կավի շաղախով կառուցված զուգահեռ և ուղղահայաց պատեր: Շարունակվեցին նաև հենապատի գեպի արևմուտք և արևելք կատարվող մաքրման աշխատանքները: Արևմտյան հատվածում բացվեց պատի վերին՝ իններորդ շարքը: Պատի բարձրությունն այդ հատվածում 4,20 մ է: 10 մ առաջ գնալուց հետո հենապատն ընդհատվեց անհավասար շարվածքով (նկ. 4): Այսինքն, այն ավերվել է և հետադայում ամրացնելու համար արանքները լրացվել են բազալտի քարերով: Հենապատի պահպանված մասի երկարությունն արևելյան անկյունից կազմեց 28,30 մ:

Քանդված հատվածի ստորին երեք շարքերի մակարդակին, դեպի հյուսիս-արևելք, քիչ թեքությամբ կցվել է բազալտի խոշոր զանգվածներով և սալերով կառուցված մի պատ: Վերջինիս վրայից հայտնաբերվեց խիստ քայքայված պղնձե փոքրիկ մի դրամ: Այդ շերտում հայտնաբերված նյութերը վերաբերում են I–II դդ.: Խրամատի նոր բացված հատվածում (9 մ), ստորին շերտում երևան եկան հենապատին զուգահեռ և ի կորդո 2 մ բարձր կառուցված միջնադարյան պատեր (նկ. 17): Վերջիններիս շարվածքում հանդիպում են հարթակի սալահատակին պատկանող կրաքարե, լավ մշակված սալեր (երկ. 80–100 սմ, լայն. 50 սմ, հաստ. 23–24 սմ):

Հետախուզական աշխատանքներ կատարվեցին հյուսիսային պատի ներսի մասում՝ ճշգրտելու համար դրա լայնությունը և կառուցողական տեխնիկան: Պարզվեց, որ այն միաշար հենապատ է, իսկ լիցքն արված է հենապատի կառուցման ժամանակ, որպես հարթակ, վրան ինչ-որ համալիր կառուցելու համար: Հարթակի պահպանված բարձրությունը լիցքի հետ միասին 6,5–7 մ է, սակայն պետք է որ այն ավելի բարձր եղած լիներ՝ արևմտյան մասում գտնվող բլրակի մակարդակին հավասարեցնելու համար:

Հյուսիսային պատի արևելյան կողմում մաքրվեցին անկյունը և արևելյան պատը (նկ. 5), այն բաղկացած է չորս շարքից (լայն. 2,50 մ). արտաքին երեքը հյուսիսային պատից 2,30 մ հեռանալուց հետո ընդհատվում

[7] Ա. Գ. Կ ա ն ե ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 185-188, նկ. 5, 7:

են, դրանք չեն պահպանվել: Դեպի հարավ, անկյունից սկսած վերին չորս շարքը (8 մ) նոր հարթակի հյուսիսային հենապատը կառուցելիս քանդվել է: Արևելյան պատի ներսից առաջին շարքի քարերը «ռուստիկում» մշակում ունեն: Հյուսիսարևելյան անկյան քարը մոտ 5-6 սմ հեռացել է կողքի քարից, հավանաբար նստվածքի պատճառով: Այսինքն, արևելյան պատը ևս միաշար է եղել: Նստվածք տալուց հետո, պատն ամրացնելու նպատակով ավելացվել է ևս երեք շարք. դա տեղի է ունեցել մինչ մ.թ.ա. Iդ. կեսերը: II շարքի (ներսից) քարերը ոչ միշտ են իրար հետ ամրացված. իսկ I–III շարքի քարերն ընդհանրապես ամրացված չեն: Բացի այդ, II շարքի քարերը հյուսիսային կողմի հենապատի ուղղությունից 5–7 սմ ներս են դրված: III–IV-ի քարերն ամրացված են և՛ իրար, և՛ կողքի շարքի քարերի հետ (նկ. 7): IV շարքի քարերն արտաքինից նույնպես «ռուստիկում» մշակում ունեն:

Նոր կառուցված հենապատի ցոկոլը կառուցված է նույն եղանակով, ինչ որ հյուսիս արևմտյան անկյունի վերոհիշյալ թեք պատը, այսինքն՝ բազալտի խոշոր զանգվածներով ու սալերով, հին հենապատերից վերցված, մի շարքից բաղկացած կրաքարերով: Արևելքից արևմուտք ձգվող նոր հենապատի «ռուստիկում» ձևի մշակումով արտաքին երեսը կրկին հյուսիսային կողմում է, բացված երկարությունը հավասար է 10,60 մ (նկ. 6):

Արևելյան և նոր կառուցված հարթակի հենապատի ստորին շերտերի նյութերը պատկանում են I–II դդ.: Պեղումների ընթացքում, հատկապես հյուսիսային պատի խրամատից, գտնվեց բաղնիքներին բնորոշ, մեծ քանակությամբ շինարարական խեցեղեն՝ հիպոկաուստի սկավառակաձև (20, 24-25 սմ) թրծած աղյուսներ, ուղղանկյուն և դլանաձև, կենտրոնում անցքերով խողովակե հենակներ՝ 6,5–8 և 4,5 սմ հաստությամբ, 50 x 33 սմ չափի երկրորդ հատակի կրաշաղախի մնացորդներ, ուղղանկյուն աղյուսներ, ջրահեռացման կիսախողովակների մասեր (հաստ. 3 սմ, տր. 15 սմ) և այլն:

Հատկապես նշանակալից են արևելյան պատի դիմաց 3,80 մ հեռավորությամբ կառուցված միջնադարյան պատի շարվածքում գտնված կրաքարե խարիսխները, մեկը տորաձև (56 x 56 սմ, բարձր. 27 սմ պլինտի վրա բարձիկով, և գլանի՝ տր. 43 սմ, ընդ. բարձր. 48 սմ), մյուսը՝ ատտիկյան (բարձր. 43 սմ, ներքևի տր. 51, վերին մասի տր. 48 սմ), ներքևում և վերևում ունի ուղղահայաց ամրացման համար արված, քառակուսի ակոսներ (7,4 x 7,4 սմ, 7,5 x 7,5 սմ): Ստորին շերտում, երկու շարքերի մակարդակից գտնվեցին հարթ մակերեսով գլանի մասեր (տր. 50 սմ), կրաքարե երկու փոքր սանդ (բարձր. 24 սմ, հատ. տր. 21 սմ, պսակի տր. 32 սմ, խոր. 12 սմ), կղմինդրների բեկորներ, շքաղյուսի մասեր, I–II դդ. խեցեղեն, ռուտերև պսակով սափորներ, կճուճներ, միջին մեծության լայնաբերան (տր. 36 սմ) կավե կաթսայի բեկոր. առյուծագլուխ ծորակով, ուսին պաբանաձև ռելիեֆ զարդով, կարմիր անգոբով պատած, փայլեցրած (նկ. 14): Առյուծը պատկերված է լայն բացած երախով, երևում են սուր ժանիքները: Ակոններով տրված են ականջները, աչքերը՝ խոռոչների մեջ, քթածակերը, փորագիր ընդհանուր գծերով՝ մազերն ու բաշը: Նույն մակարդակից

հայտնաբերվեցին կնքադրոշմների համար հատուկ պատրաստված կավե դնդիկներ, պղնձե երկու խոշոր դրամ (հռոմեական, վատ սլահպանված), տարբեր գույներով ու զարդերով որմնանկարների բեկորներ, ներմուծված խեցեղենի, ամֆորիսկների ունկվենտարիաների գավաթների, ամֆորաների և այլ անոթների բեկորներ, տեղական և ներմուծված ապակե սրվակների, թասերի մասեր (մ. թ. ա. I դ.) և այլն:

«Ռուստիկում» ձևով մշակված քարեր հայտնի են դեռևս ուրարտական և ավելի վաղ շրջաններից: Արտաշատի հենապատի կրաքարերի տաշվածքը թեև «ռուստիկում» ձևի է, բայց տարբերվում է վերոհիշյալներից: Հունական աշխարհում, հելլենիստական շրջանում, շինարարական տեխնիկան փոփոխության է ենթարկվում: Շինաքարի մակերեսը հարթել-հղկելու փոխարեն այն թողնում են խորդուբորդ, ջարդվածքների նկատելի հետքերով: «Ռուստիկում» ձևով մշակված ճակատի քարի եզրերը մեծ մասամբ երեք կողմից նեղ ժապավենաձև տաշում էին, այնպես որ ջարդվածքի հետքերը հարթվեն: Այդ ձևով մշակված քարերով պատի շարվածքն ավելի հոծության, վիթխարիության տեսք էր տալիս, իսկ լույս ու ստվերի խաղը գեղատեսիլ տպավորություն էր թողնում[8]: Ճիշտ այդպիսին է նաև Արտաշատի նորաբաց հենապատը: Ինչ վերաբերում է քարերը «ծիծեռնակապոչ» կապերի միջոցով իրար հետ ամրացնելուն, ապա այն նույնպես բնորոշ է հելլենիստական շրջանին:

«Ռուստիկում» մշակումով, «ծիծեռնակապոչ» կապերով մի շարք խոշոր կրաքարեր կան Խոր Վիրապի (VI) հարևանությամբ գտնվող բլրակի վրա տեղադրված ուշ միջնադարյան գերեզմանոցում: Արտաշատից տարված նույնանման կրաքարեր հայտնի են նաև ներկայիս Արտաշատի մոտ գտնվող Մրգավան դյուղի գերեզմանոցից:

«Ծիծեռնակապոչ» կապերը հանդիպում են Հունաստանում, գլխավորապես մ. թ. ա. VII–VI դդ. ճարտարապետության մեջ[9]: Այնուհետև դրանք հանդիպում են Էգեյան աշխարհում, Առաջավոր Ասիայում (Սիրիա, Միջագետք, Եգիպտոս), Փոքր Ասիայում՝ Հոնիայում: Լիդիայում[10] վարպետներն այն օգտագործել են Պասարգադայի և Պերսեպոլսի շինարարության ժամանակ[11]: Հունաստանում մ. թ. ա. V–III դդ. տեխնիկական այդ նորամուծությունը համեմատաբար քիչ է կիրառվել[12]: Սակայն Արևմուտքում, ընդ-

---

[8] Античная цивилизация. М., 1973, с. 40.

[9] A. K. O r l a n d o s. Les materiaux de construction et la technique architecturale des Ancienes Grecs. 2 partie. Paris, 1968, p. 102-103, note 1, 106.

[10] C. N y l a n d e r. Ionians in Pasargadae. Uppsala, 1970, p. 63–66, fig. 19 a, b, c; *ն ո ւ յ ն ի՝* Clamps and Chronology.– "Iranica Antiqua", VI, 1966, p. 132-133; R. N a u m a n. Architectur Kleinasiens. Tubingen, 1955, p. 104-105; A. K. O r l a n d o s. *Նշվ. աշխ., էջ 102-103, նկ. 112,* Г. А. Т и р а ц я н. Новые археологические материалы послеурартского времени на территории западной Армении (Турция) и их место в истории древней армянской культуры.— "Древний Восток", 2, Ереван, 1976, с. 149-156.

[11] A. K. O r l a n d o s. *Նշվ. աշխ., էջ 104,* C. N y l a n d e r. Ionians in Pasargadae, p. 42, 43, 65, 66, fig. 10a; *ն ո ւ յ ն ի՝* Clamps and Chronology, pl. XXXI,1,2.

[12] В. Н. Ф е д о р о в. Некоторые особенности крепления каменных блоков в зодчестве Херсонеса Таврического V—II вв. до н. э.— "Проблемы античной культуры", М., 1986, с. 202.

հանրապես, այն շարունակվում է նաև հելլենիստական և ուշ անտիկ շրջանում[13]: Խերսոնեսում «ծիծեռնակապոչ» կապերը, որպես կրաքարերի ամրացման միջոց, սկսել են օգտագործել եկած գաղութաբնակները մ. թ. ա. IV դ. վերջից մինչև մ. թ. ա. II դ. սկիզբը[14]: Սակայն «ծիծեռնակապոչ» կապերով փայտերի օգնությամբ քարերի ամրացումն այնքան էլ հուսալի չէր: Ուստի նույն փոսիկներում անցքեր են փորվել և դրանք փոխարինվել են երկաթե կեռ ծայրեր ունեցող կապերով, որոնք ամրացվել են կապարով[15]:

Հայաստանում, Վանա լճի հյուսիսային կողմում գտնվող Զարիշատ (Զեռնակի թեփե-ոսկե բլուր) քաղաքը ուսումնասիրողներից Կ. Նիլանդերը, ինչպես նաև Բարնեյն ու Լաուսոնը[16] այն համարում են ուրարտական քաղաք: Պարսպի հիմք հանդիսացող հարթեցված ժայռին և բլրի ստորոտին կառուցված ժամանակակից Իշեկլիքեյ գյուղի բնակարաններում օգտագործված «ծիծեռնակապոչ» կապերով կրաքարե վեմերը Նիլանդերը համարում է ուրարտական[17]: Գ. Տիրացյանը, սակայն, գտնում է, որ դրանք Հայաստանում հանդես են գալիս հետուրարտական՝ աքեմենյան և հելլենիստական շրջանում[18]:

Այս առումով ուշագրավ են Արմավիրի միջնաբերդի մուտքից (հյուսիսային կողմում) ոչ հեռու, բլրի լանջին կառուցված «ծիծեռնակապոչ» կապեր ունեցող քարերով կլոր աշտարակի ստորին շարքերը: Ենթադրվում է, որ վերջինս կառուցվել է հելլենիստական շրջանում, ամրոցի մուտքի պաշտպանությունն ուժեղացնելու համար: Նման մշակում ունեցող քարերով է վերակառուցվել նաև միջնաբերդի դաղաթի տաճարական շինությունը: Բ. Առաքելյանը գտնում է, որ Հայաստանում «ծիծեռնակապոչ» կապերով տեխնիկան հանդես է գալիս հելլենիստական շրջանում[19]: Գ. Տիրացյանը ենթադրում է, որ տաճարի արևելյան մասն է միայն ինչ-որ չափով ձևափոխվել հելլենիստական շրջանում և ցանկալի է համարում պահպանված կառույցը համարել ուրարտական տաճար, որը որպես այդպիսին օգտագործվել է ավելի ուշ շրջանում[20]: Մինչդեռ 1999 թ. և 2002 թ. պեղումները տաճարական շինության հատվածում ցույց տվեցին, որ այսօր-

---

[13] A. K. O r l a n d o s. Նշվ. աշխ., էջ 103, ծանոթ. 1, G. G r u b e n. Zum Arthemis-Tempel non Sardis, Mitteilungen des Deutschen Archaeologischen Instituts, Athenische Abteilung, 1961, Abb. 76; Г. А. Т и р а ц я н. Նշվ. աշխ., էջ 152, А. Н. К а р а с е в. Архитектура. Античные города Северного Причерноморья. М.—Л., 1955, с. 190 (V—IV вв.).

[14] В. Н. Ф е д о р о в. Նշվ. աշխ., էջ 202, նկ. 1.

[15] Նույն տեղում, էջ 202–204, նկ. 2а.

[16] C. A. B u r n e y and G. R. I. L a w s o n. Measured plans of Urartian Fortresses.– "Anatolian Studies", X, 1960, p. 185-188.

[17] C. N y l a n d e r. Նշվ. աշխ., էջ 64, comment 160, նույնի՝ Clamps and Chronology, էջ 145-148, նկ. 3, 9, Г. А. Т и р а ц я н. Նշվ. աշխ., էջ 149-150:

[18] Г. А. Т и р а ц я н. Նշվ. աշխ., էջ 153:

[19] Б. Н. А р а к е л я н. О некоторых результатах археологического изучения древнего Армавира.— ИФЖ, 1969, № 4, с. 165—166, рис. 5; Г. А. Т и р а ц я н. Урартский Армавир.— "Культура Востока", Л., 1978, с. 106.

[20] Г. А. Т и р а ц я н. Культура древней Армении VI в. до н. э.—III в. н. э. Ереван, 1988, с. 82.

վա կանգուն շինությունը, որի պատերի մեջ օգտագործված են ոչ ճիշտ դիրքով գրված խարիսխները, «ծիծեռնակապոչ» կապերով քարեր և ուրարտական հարթ լավ մշակումով հսկայական վեմեր, ուշ միջնադարյան եկեղեցի է, որի մուտքը, արևելյան պատին զուգահեռ միջանցքով, բացվում է հյուսիսային կողմում: Արևմտյան մասում մաքրվեց հսկայական քարերով պատրաստված ուրարտական տաճարի հարթակը՝ 50 քմ մակերեսով: Տաճարական կառույցի հարավարևելյան անկյունում բացվեց «ծիծեռնակապոչ» կապերով քարերի երեք շարք: Բացվեցին նաև հարավային պատը և հարավարևմտյան անկյունը, որոնք նույն տեխնիկայով են կառուցված: Այսինքն, տաճարական շինությունների հատակագծերը, ուրարտականը, հելլենիստականը և միջնադարյանը չեն համընկել իրենց ուղղվածությամբ, գրված տարածքով և շինարարական տեխնիկայով: Ուշագրավ է որոշ «ծիծեռնակապոչ» կապերով քարերի կրկնակի օգտագործման փաստը, քանի որ դրանց երկու երեսին արված փորվածքների չափերը և խորությունները տարբեր են[21]: Այսինքն, հելլենիստական տաճարի շենքը (մ. թ. ա. III դ.) գուցե Երվանդի և Արտաշեսի կռիվների ժամանակ վնասվել է կամ քանդվել և վերականգնվել է մ. թ. ա. II դ., նույն տեխնիկայով.:

Ինչ վերաբերում է ուրարտական և հելլենիստական «ռուստիկում» եղանակով մշակված քարերին, որոնք Ա. Ուվարովն[22] իր ժամանակին համարել է ավելի ուշ շրջանի, Վ. Նիկոլսկին իրավացիորեն հերքում է դա, ցույց տալով, որ դրանք ուրարտական են, որովհետև հաճախ են հանդիպում սեպագիր արձանագրություններով քարեր[23]: Էրզրումից արևելք գտնվող Դարոյնքի (Հասան Ղալա) ուղղանկյուն դամբարանի անկյունային կրաքարերը նույնպես «ծիծեռնակապոչ» կապերով են ամրացված: Այդ հարուստ դամբարանից մեզ է հասել միայն այծի եղջյուրներով ոսկյա առյուծագլուխ մի մանյակ[24]: Բ. Պիոտրովսկին գտնում է, որ մանյակն իր ոճով սկյութա-աքեմենյան միջավայրի արդյունք է և թվագրվում է մ. թ. ա. V–IV դդ.[25]: Բ. Առաքելյանը այն թվագրում է մ. թ. ա. IV դ. վերջի, ոչ ուշ, քան III դ. սկզբի արտադրանք[26], ելնելով վերոհիշյալ իր այն կարծիքից, որ «ծիծեռնակապոչ» կապերը մ. թ. ա. III դ. են հանդես գալիս Հայաստանում: Նա գտնում է, որ ապարանջանը քիչ ավելի վաղ է դամբա-

---

[21] *Ի. Կարապետյան, Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան, Գ. Ղաֆադարյան, Արմավիրի 1999 թ. աշխատանքների արդյունքները.– Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը, Գիտաժողով, Երևան, 2000, էջ 24–26:*

[22] А. С. Уваров. Исследование местности, на которой предполагались развалины Армавира.— "Протоколы подготовительного комитета и археологического съезда в Тбилиси", 1882, с. 443—444.

[23] М. В. Никольский. Клинообразные надписи Закавказья.— "Материалы по археологии Кавказа", вып. V, М., 1896, с. 57; Б. Н. Аракелян. *Նշվ. աշխ., էջ 166:*

[24] С. В. Тер-Аветисян. Курганы Хасан Калы.— "Известия Кавказского историко-археологического института". Т. VI, Тифлис, 1926, с. 71—88.

[25] Б. Б. Пиотровский. Скифы и Древний Восток.— "Советская археология", XIX, 1954, с. 151.

[26] *Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության (մ. թ. ա. VI- մ. թ. III դդ.), Երևան, 1976:*

բանից: Գ. Տիրացյանը[27] նույնպես այն համարում է նույն ժամանակի գործ և գտնում, որ «ծիծեռնակապոչ» կապերը Հայաստանում հանդես են գալիս մ.թ.ա. IV–III դդ. սահմանագլխին: Սակայն տվյալ դեպքում ավելի կարևոր է, և մեր կարծիքով ճիշտ, ամբողջ նյութին ծանոթ Ս. Տեր-Ավետիսյանի և Յա. Սմիռնովի կարծիքը, ըստ որի դամբարանն իր նյութերով պատկանում է մ. թ. ա. III–II դդ.[28]: «Ծիծեռնակապոչ» կապերով քարեր կան նաև Անիի կամսարականների ամրոցի պարսպի մեջ, երկրորդ օգտագործմամբ, ինչը նույնպես վկայում է Անիում հելլենիստական շրջանի (մ. թ. ա. II-I դդ.) կառույցի (ամրոցի՞) գոյության մասին[29]:

«Ծիծեռնակապոչ» կապերով քարեր հանդիպում են Արմավիրում, Երվանդաշատում, Երվանդակերտում, Անիում, Զարիշատում, Դարոյնքում, Ցոլակերտում (Տաշքուրուն)[30], Քեղվա (Կաքավաբերդ) ամրոցում (հայտնաբերել ենք 2003 թ. այցելության ժամանակ), Գառնիում և այլուր: Ուշագրավ է, որ Գառնի ամրոցի պարիսպները կառուցելիս կիրառվել է քարերը միացնելու երկու եղանակ՝ երկաթե դամերի կեռ ծայրերը խոռոչի մեջ ագուցելու (պիրոն) և կապարով լցնելու ու «ծիծեռնակապոչ» կապերի միջոցով: Վերջինս նկատել ենք 2002 թ. ամրոցի մուտքի հատվածում աշխատելիս, աջ աշտարակի ստորին սալի եզրին:

Արտաշատի նորահայտ համալիրը գտնվում է քաղաքի հյուսիս-արևմտյան մասում: Այստեղ մ. թ. ա. IIդ. կրաքարե շքեղ հենապատով կառուցված բարձր հարթակի վրա վեր է խոյացել Արտաշատի մոնումենտալ, հասարակական կարևոր համալիրներից մեկը, որին և պատկանել է տորաձև խարիսխը (նկ. 10), դուցե նաև հարթ մակերեսով սյան մասերը:

Արդյոք դա Մովսես Խորենացու հիշատակած, քաղաքից դուրս, ճանապարհին կառուցված Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմես-Տիրի տաճարը[31] չէ՞: Դեռևս 1980-ական թվականներին նշվել է, որ վերջինս չէր կարող լինել ոչ Վաղարշապատի մոտ և ոչ էլ Դվինում, քանի որ քաղաքից դուրս չի նշանակում քաղաքից հեռու: Այն պետք է կառուցված լիներ Արաքսի աջ ափին գտնվող մեծ բլրի վրա, Տափերական կամրջով անցնող, դեպի հարավ դնացող ճանապարհի եզրին[32] («Արքունի ճանապարհն»): Արտաշատի հիմնադրման ժամանակ քաղաքը զբաղեցրել է միայն բլուրները, այսինքն

---

[27] Г. А. Т и р а ц я н. К вопросу о торевтике и ювелирном деле Армении в Ахеменидское время.— ИФЖ, 1969, №1, с. 103-104, *ն ա ե ւ ն ի՝* Культура Древней Армении, с. 61, 62, табл. XIV,$_2$, ссылка 178. *Հայկական ճարտարապետության պատմություն. հ. I, Երևան, 1996, էջ 212,*

[28] С. В. Т е р - А в е т и с я н. *Նշվ. աշխ., էջ 74, 84, աղ. II.*

[29] Н. Я. М а р р. Ани. Книжная история города и раскопки на месте городища. Л.—М., 1934, с. 49, *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Երևան, 1942, էջ 331, ն ո ւ յ ն ի՝ հ. II, Երևան, 1948, էջ 183,* J. K h a c h a t r i a n. Ani à l'Epoque antique.– "Revue des etudes Armeniennes", t. 26, 1996-1997, p. 46-47.

[30] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նշվ. աշխ., հ. I, էջ 145, 284–285, 331,* М. В. Н и к о л ь с к и й. *Նշվ. աշխ., էջ 17:*

[31] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի), Երևան, 1991, II, 86:*

[32] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազամույն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին.– «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1987, №2, էջ 50-51:*



Նկ. 13

Նկ. 14



Նկ. 15

Նկ. 16

Նկ. 18

այս շինությունը եղել է քաղաքի պարիսպներից դուրս: Արտաշատը միայն մ. թ. ա. I մ. թ. I–II դդ. է զբաղեցրել քաղաքի հարթավայրային մասը[33]: Մովսես Խորենացու վկայությունը, հավանաբար, վերաբերում է Արտաշես I-ի ժամանակ կառուցված քաղաքին: Հունա-հռոմեական աղբյուրները և վաղ միջնադարյան մեր պատմիչները քաղաքից դուրս կառուցված շքեղ տաճարի մասին չեն հիշատակում: Կամ էլ հենապատերի հիմքերը 5 մ-ցածր են եղել այսօրվա ռելիեֆի մակարդակից, ե. Արաքսը կարող էր այդ ժամանակ շրջանցել համալիրը արևելյան կողմից, այսօրվա մեծ ջրանցքի տեղով: Այդ հարցը ստուգումը դժվարանում է նրանով, որ Արտաշատի հարթավայրային հատվածը 1970-ական թվականներին գրեյդերներով հարթեցվել է: Իսկ Արաքսի գարնանային վարարումների դեմն առնելու համար 1969 թ. նորահայտ հենապատերից 30–40 մ արևելք, գետին զուգահեռ կառուցվել է 6–7 մ բարձրության լայն հողապատնեշ, որի համար այս տարածքի հողերը բուլդոզերներով հրվել են այնտեղ: Պատնեշի մեջ կարող են լինել նաև համալիրներին պատկանող շատ քարեր:

Մ. թ. ա. I դ. վերջերին, կամ Կորբուլոնի արշավանքի ժամանակ, համալիրն ավերվել է: Գրեթե նույն տարածքում մ. թ. I դ. երկրորդ կեսին կամ IIդ. կառուցվել է նոր հարթակ, շինարարական նոր տեխնիկայով (երկաթե դամբրով, կեռ ծայրեր ունեցող կապերով), և հասարարական նոր համալիր, հնարավոր է «գառնիատիպ» տաճարով: Վերջինիս են պատկանում ատտիկյան խարիսխը (նկ. 11), ատամնավոր սյան բեկորը, քանդակազարդ սալը: Տաճարը, հավանաբար, նվիրված է եղել Արևի աստծուն՝ Արեգ-Միհր-Ասլոլոն-Հերմես-Տիրին: Այդ են վկայում առյուծագլուխ ծորակով կաթսան, ճառագայթավոր զարդով սկուտեղի հատակը: Ծորակավոր կաթսաներ հաճախ են հանդիպում Հայաստանի անտիկ շրջանի հուշարձաններում, այդ թվում Արմավիրում և Արտաշատում, սակայն դրանք կենդանակերպ չեն: Առյուծը համարվում է ամառային արևի խորհրդանշանը: Այն որպես կրակի և արևի, ինչպես նաև աստվածային հերոսի և թագավորի խորհրդանշան, ընդհանրապես բնորոշ է Առաջավոր Ասիայի համար[34]: Տաճարների գոյության օգտին են խոսում նաև կրաքարե փոքր սանդերը, ներմուծված անոթների մեծ մասը, որոնք ծառայել են որպես ձիթապտղի յուղի և օծանելիքների տարաներ: Հին հենապատի հյուսիսային կողմում, մ. թ. I–II դդ. կառուցվել են բաղնիքներ և այլ նշանակության շինություններ, այդտեղից են հայտնաբերվել խճանկարի բեկորը և վերոհիշյալ շինարարական խեցեղենի մեծ մասը: Բլրակի հարավարևմտյան կողմում պահպանվել է սև մարմարի զանգվածներով կառուցված պարսպի մի հատված: Հնարավոր է, որ համալիրն ունեցել է իր պարիսպը, որի մի հատվածը պահպանվել է բլրակի հարավարևմտյան մասում, կամ հետագայում, երբ քաղաքի թաղամասերը զբաղեցրել են հարթավայրը, մնացել է քաղաքային ընդհանուր պարսպի ներսում:

Նշված հարցերի պատասխանները կարող են ճշգրտվել հետագա պեղումների ընթացքում:

---

[33] Ժ. Խաչատրյան, Հին Արտաշատի տեղադրության հարցի շուրջ.– Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Երևան, 2001, էջ 42–48:

[34] Мифы народов мира. Энциклопедия, т. 2, 1988, с. 41 – 42.

Ստրաբոնը[35] և Պլուտարքոսը[36], հավանաբար, տեսել են քաղաքի կանոնավոր միասնական հատակագծով կառուցված թաղամասերը, միջնաբերդում և տարբեր հատվածներում եղած պալատական, տաճարական ու հասարակական մյուս մոնումենտալ շինությունները և հատուկ շեշտել Արտաշատի «գեղեցիկ», «մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք» լինելը:

Նորահայտ հուշարձանը հարուստ նյութեր է տալիս Արտաշատի և Հայաստանի հելլենիստական և ուշ անտիկ դարաշրջանի պատմության, ճարտարապետության զարգացման աստիճանի, մշակույթի, քաղաքի բազմակողմանի կյանքի վերաբերյալ, իսկ բլուրների վրա և հարթավայրում եղած բաղնիքները վկայում են քաղաքացիների կենցաղում կոմունալ-կենցաղային կառույցների լայն տարածման և քաղաքային կուլտուրայի բարձր մակարդակի մասին:

Լուսառատ գյուղի հյուսիսային ծայրամասում, 1979 թ. բացված ուրարտական առանձնատնից 20 մ հարավ, ջրագիծ անցկացնելու ժամանակ, ավերվել էր կավե սարկոֆագի մեջ կատարված մի թաղում: Եվ սարկոֆագը, և՛ հանգուցյալին ուղեկցող նյութերը կոտրատվել էին: Մեզ են հանձնվել կոտրված սարկոֆագի բեկորները, շատ բարակ (ֆոլգայի հաստության) շեղանկյունաձև երեք ոսկե թիթեղ, կարոսի եռատամ ոսկե տերև (մեկի սուր ծայրը թերի), կավե միկանթանի խոհանոցային դավաթ, արծաթե հայելու և ապակե երկու սրվակների բեկորներ: Մեզ հաջողվեց պարզել սարկոֆագի դիրքը, որը հյուսիսից հարավ է: Այն դեպի ոտքերն աստիճանաբար նեղանում է, ունի ուղղահայաց պատեր (բարձր. 35 սմ), հարթ հատակ (երկ. 180 սմ, գլխի մասում լայն. 45 սմ, ոտքերի մասում՝ 25 սմ): Պսակը դրսից եզերված է ատամնավոր զարդերով: Սարկոֆագը ծածկված է եղել թրծած հարթ աղյուսներով (հաստ. 4-5 սմ): Կմախքի ոսկորները գրեթե չեն պահպանվել, բացի մի քանի ատամներից և առանձին փոքր ոսկորներից: Հաջողվեց որոշել հանգուցյալի սեռն ու տարիքը՝ 30–35 տարեկան կին[37]:

Սա Արտաշատից հայտնաբերված, հուղարկավորության ոսկե պսակով երկրորդ թաղումն է: Առաջինը հայտնաբերվել է Խոր Վիրապի բլուրների արևմտյան կողմում գտնվող ցածր բլրակի վրա: Դամբարանը կիսով չափ փորված էր ժայռի մեջ, ուր տեղադրված էր փայտե դագաղը[38] (դամբ. № 84): Կավե դագաղների մեջ թաղելու սովորությունը նորություն չէ Հայաստանում: Այն հայտնի է ուրարտական և հելլենիստական շրջանից[39]: Սակայն դրանք իրենց ձևերով և չափերով տարբերվում են ուշ անտիկ շրջանի կավե սարկոֆագներից: Արտաշատի, Վաղարշապատի, Սևանի ավազանի հայտնագործությունները վկայում են, որ մ.թ. III–IV դդ. կարասային թաղումները մասամբ փոխարինվում են կավե դագաղներով: Արտաշատում այդ շրջանի կավե դագաղներով թաղումներ հայտնաբերվել են

---

[35] S t r a b o, XI, XIV, 6.

[36] P l u t. Lucullus, XXXI, 5.

[37] *Որոշել է մարդաբան Ռ. Մկրտչյանը:*

[38] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ուշ հելլենիստական շրջանի եզակի դամբարան.– ԼՀԳ, 1977, № 1, էջ 55-63, Ն ո ւ յ ն ի՝ Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր. Երևան, 1981, էջ 30, 38, 43-47, տախտ. XXI$_{1-3, 6-9}$, նկ. 59, 9, 52$_{1-7, 10}$:*

[39] С. Е с а я н, А. К а л а н т а р я н. Позднеурартское погребение Ошаканского могильника.– ИФЖ, 1976, № 3, с. 269-275, *Արտաշատ II..., էջ 33:*

խոր վիրապ տանող ճանապարհի ձախ եզրին («Բ» համալիր), բլուրներից արևմուտք, ցածրադիր բարձունքի վրա[40] (դամբ. № 70-72): Արտաշատի սարկոֆագները և գրանցում կատարված թաղումները նման են Հայաստանի մյուս վայրերից հայտնաբերվածներին: Դրանք չունեն հաստատուն կողմնորոշում: Դիակները թաղված են մեջքի վրա ձեռքերը կողքերին: Այսինքն, թաղման ձևերում փոփոխություններ են տեղի ունեցել և ըստ այդմ էլ պատրաստվել են նոր տիպի դագաղներ: Կավե սարկոֆագներ շատ են հայտնաբերվել Վաղարշապատում: Այստեղ դրանք երկու տեսակի են, մեկը Արտաշատի վերոհիշյալ սարկոֆագների նման[41], մյուսը՝ մասամբ պյանաձև կիսակոշկի տեսքով, ոտքերի կողմում լայն անցքով[42]:

III դ. երկրորդ կեսի և IV դ. սկզբի կավե դագաղներ ու կոշկաձև սարկոֆագներ հայտնաբերվել են նաև Սևանի ավազանի Լիճք և Լեռնակերտ գյուղերում[43]: Տարբեր ժամանակի կավե սարկոֆագներում կատարված թաղումներ կան Վրաստանում, Ադրբեջանում, Իրանում, Սիրիայում, Իրաքում, Միջին Ասիայում, Հունաստանում, Եգիպտոսում և այլուր[44]: Ինչպես իրավացիորեն նկատել է Աշխ. Քալանթարը, կոշկաձև սարկոֆագները պարթևական ազդեցության արդյունք են և Հայաստան են անցել Միջագետքից[45]: Վերոհիշյալ ուղղահայաց պատերով սարկոֆագները նույնպես, Հայաստան և, ընդհանրապես, Անդրկովկաս են թափանցել Միջագետքից, քանի որ դրանք լայնորեն տարածված էին Միջագետքում և հարող շրջաններում: Անդրկովկասից հյուսիս կավե սարկոֆագներ մեզ հայտնի չեն: Հայաստանում կավե սարկոֆագները տարածում են ստացել մ. թ. III դ. կեսերից: Դրանք կարող էին պատրաստվել հատուկ վառարաններում: Կավե սարկոֆագների արտադրության արհեստանոցներ կարող էին լինել խոշոր քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, որտեղ դրանց համար վաճառահանման շուկա կար: Վաղարշապատում և Արտաշատում, անպայմանորեն, եղել է կավե սարկոֆագների արտադրություն: Այդ են վկայում նաև Վաղարշապատի կավե դագաղների ծածկի սալերի վրայի նշանները, որոնք, հավանաբար, արհեստանոցի նշաններն են[46]:

Ուշագրավ են սարկոֆագից գտնված ոսկե շատ բարակ թիթեղից (նկ. 18) պատրաստված շեղանկյունները (3 հատ), որոնք երկայնքով անցնող ակոսով բաժանված են երկու եռանկյունների (երկ. 5,5 սմ, լայն. 3,5 սմ): Շեղանկյունաձև երեք շատ բարակ ոսկե թիթեղներով հռոմեական թաղում հայտնաբերվել է Արևմտյան Հայաստանից՝ Պաղնիկ Օրենի պեղումնե-

---

[40] Արտաշատ II, էջ 19:

[41] Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. II, էջ 269 և հա., նկ. 257, Աշխ. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, էջ 40, նկ. 13, Ռ. Թորոսյան, Ս. Կրկյաշարյան, Հնագիտական նորույթներ էջմիածնից.– ՊԲՀ, 1971, № 4, էջ 286-286, նկ. 2, Ժ. Խաչատրյան, Ռ. Թորոսյան, Նորահայտ նյութեր Վաղարշապատի հյուսիս-արևելյան դամբարանադաշտից.– ԼՀԳ, 1976, № 5, էջ 99 և հտ.:

[42] Աշխ. Քալանթար, նշվ. աշխ., էջ 40, նկ. 13, դ, զ:

[43] Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանթարյան, Մարտունու և Վարդենիսի շրջանների անտիկ և միջնադարյան հուշարձանները.– ԼՀԳ, 1972, № 1, էջ 60:

[44] Արտաշատ II, էջ 35:

[45] Աշխ.. Քալանթար, նշվ. աշխ., էջ 51 և հտ., Արտաշատ II, էջ 37:

[46] Ժ. Խաչատրյան, Ռ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 102, ծանոթ. 15, տախտ. III,,, Արտաշատ II, էջ 37:

րից[47]: Ընդհանրապես, չեղանկյունաձև թիթեղներով պսակներ շատ հազվադեպ են հանդիպում: Ծեծելու եղանակով արված չեղանկյունիներից կազմված զարդաշղթայով է հարդարված Գեղադիրի № 3 քարե սարկոֆագից հայտնաբերված արծաթե, եզակի, օղակաձև ականջօղը. փորագիր չեղանկյունի զարդեր են արված Սիսիանի իշխանական դամբարանից հայտնաբերված ոտքի ապարանջանների[48] մակերեսին: Շեղանկյունաձև թիթեղներով արծաթե հարուստ փորագիր զարդերով ճակատակալներ (դիադեմաներ) հայտնի են Վրաստանից՝ Վանիի, ազնվական կոլխիդուհու դամբարանից, Իթխվիսիից և այլ վայրերից. սակայն դրանք պատկանում են մ. թ. ա. VI դ. և համարվում են Կոլխիդային բնորոշ արտադրանք[49]: Այդ ժամանակին է պատկանում նաև Ուրալի մարզից հայտնաբերված մանյակը (11 x 12,8 սմ), որը նույնպես չեղանկյունաձև շղթայով է հարդարված. այն ձուլված է կաղապարի մեջ և վրան փաթաթված ու սեղմված է ոսկե բարակ թիթեղ[50]:

Արտաշատի սարկոֆագից հայտնաբերված իրերից մեզ են հասել կարոսի ոսկե երկու տերև, որոնցից մեկն ավելի լայն է (պահպ. մասի երկ. 2,7 սմ է, լայն. 2,5 սմ), քան մյուսը (երկ. 3,3 սմ, լայն. 2,3 սմ): Դրանց վրա նկատելի են բարակ ակոսներով նրբորեն արված տերևների երակները: Արտաշատի վերոհիշյալ բլրակի վրայի դամբարանից հայտնաբերված կարոսի տերևներն ավելի մեծ են[51] (երկ. 4-5 սմ, լայն. 3-4 սմ): Թաղման ժամանակ պսակ կապելու, ականակալներ և շրթնակալներ դնելու այս սովորությունը արևելամիջերկրածովյան և առաջավորասիական ծագում ունի, որովհետև ամենահին գյուտերը, որոնք վերաբերում են մ. թ. ա. III–II հազարամյակներին, կատարվել են այդ շրջաններում[52]: Ենթադրվում է, որ դա առաջացել է հանգուցյալի դեմքը դիմակով ծածկելու ծիսական սովորությունից[53]:

Դիմակները, ականակալները, շրթնակալները, պսակները լինում էին տարբեր նյութերից, այդ թվում նաև ոսկուց և արծաթից: Վերջիններս հիմնականում տարածված էին հռոմեական առաջավորասիական, միջերկրածով-

---

[47] R. P. H a r p e r. Pagnik Oreni, Excavation, 1969, Keban Project, 1969, Activities, Ser. № 4, Ankara, 1971, p. 95, pl. 65,1.

[48] Ж. Х а ч а т р я н. Художественные изделия из серебра эллинистического времени.— "Второй международный симпозиум по армянскому искусству", т. I, Ереван, 1978, с. 241, рис. 57,1.

[49] О. Л о р д к и п а н и д з е. Древняя Колхида.— "Мифы и археология", Тбилиси, 1979, с. 85-89.

[50] М. Г. М о ш к о в а. Комплекс находок с ритоном из Уральской области.— "Советская археология", 1981, № 4, с. 181, рис. 7.

[51] *Արտաշատ II, էջ 77:*

[52] N. P. T o l l. The Necropolis, The Excavations at Dura-Europos.– "Preliminary Report of the Ninth season of Work 1935-1936", New-Haven, 1946, p. 115; Н. Н. П о г р е б о в а. Золотые лицевые пластины из погребений мавзолея скифского.— "История и археология древнего Крыма". Киев, 1957, с. 149 и сл.; *Արտաշատ II, էջ 43:*

[53] А. В. О р е ш н и к о в. Несколько замечаний о древностях, найденных в с. Парутино в 1891г.— "Древности", Труды Московского археологического общества, т. 15, вып. II, с. 78; Б. А. К у ф т и н. Археологические раскопки в Триалети. I, Тбилиси, 1941, с. 24; Н. Н. П о г р е б о в а. *Նշվ. աշխ., էջ 149 և հտ., Արտաշատ II, էջ 43:*



Նկ. 17

յան և հյուսիս-մերձսևծովյան շրջաններում: Դժվար է ասել Արտաշատի նորահայտ կավե սարկոֆագում կատարված թաղումների մեջ ակնակալներ եղե՞լ են, թե ոչ: Հանգուցյալի ճակատին կապված թիթեղը եթե ժապավենաձև էր, ապա լինում էր մեկ կամ երկու հատ[54], ինչպես հյուսիս-մերձսևծովյան դամբարաններում, իսկ եթե հանգուցյալի ճակատին տերևներ էին կապվում, ապա դրանք կարող էին լինել ավելի շատ: Թաղման պսակի համար սովորաբար օգտագործում էին կարոսի տերևները: Հայտնի է, որ հույները կարոսն օգտագործում էին միայն հոգեհացի ժամանակ, որպես մահացածներին նվիրված բույս»: Այդպիսի պսակներ հանդես են գալիս մ. թ. ա. I դ. վերջին, և, իհարկե, որոշակի փոփոխություններ կրելով պահպանվում են մինչև մ. թ. II–III դդ.[56]: Ոսկե և բրոնզե թաղման պսակներ են հայտնաբերվել Վրաստանից, Ալգետիից մ. թ. ա. VI–IV դդ., Կլդեեթիից՝ I–II դդ., և Մցխեթից՝ II–III դդ.[57]: Թաղման պսակով, ակնակալներով

---

[54] Н. В. П я т ы ш е в а. Ювелирные изделия Херсонеса, конец IV века до н.э. — IV в. н.э.— Труды Государственного исторического музея (далее — ГИМ), М., 1956, с. 65; М. И. М а к с и м о в а. Артюховский курган. Л., 1979, с. 130-131.

[55] Н. В. П я т ы ш е в а. *Նշվ. աշխ., էջ 67:*

[56] Древности Боспора Киммерийского, СПб., 1854, табл. V_{14}, Отчет Археологической комисии за 1875 г., СПб., 1877, с. 16; М. И. М а к с и м о в а. *Նշվ. աշխ., էջ 130-131:*

[57] Б. А. К у ф т и н. *Նշվ. աշխ., էջ 39-40, տախտ. IX,* Г. А. Л о м т а т и д з е. Клдеетский могильник. Тбилиси, 1957, с. 112, 168, рис. 19 (на груз. яз.); А. М. А п а к и д з е, Г. Ф. Г о б е д ж и ш в и л и, А. Н. К а л а н а д з е, Г. А. Л о м т а т и д з е. Мцхета, I. Тбилиси, 1958, с. 58, рис. 25, с. 114, 115, рис. 62, табл. LII, LXXXVII_5; П. М. П и р н и л а ш в и л и. К вопросу о глазных и

ու շրթնակալներով թաղումներ Հայաստանի Հանրապետության տարածքում, հելլենիստական և ուշ անտիկ շրջանի հուշարձաններում, բացի Արտաշատից, Պաղնիկ Օրենիից, չեն հանդիպում: Ուստի, մենք ենթադրել էինք, որ այս սովորությունը Հայաստան է թափանցել Սիրիայից և Փոքր Ասիայից, մ. թ. ա. I դ., Տիգրան II-ի կողմից այստեղ գաղթեցված բնակչության միջոցով[59]: Նման թաղումներ հանդիպում են Հայաստանի հարավարևմտյան շրջանի անտիկ դամբարաններում, դա, հավանաբար, սիրիական և փոքրասիական շրջաններին ավելի մոտ գտնվելու արդյունք է:

Խերսոնեսում այդ ծեսով թաղումների թիվը 10-ից ավելի է[59]: Դրանք հանդիպում են մեծ մասամբ ընտանեկան գերեզմաններում և ունևոր քաղաքացիների դամբարաններում[60]: Այսինքն, տվյալ ծեսը բնորոշ է եղել վերնախավին: Գիտնականները համակարծիք են այն հարցում, որ ակնակալները, շրթնակալները փոխարինել են ավելի վաղ շրջանի դիմակներին, որովհետև դրանք ավելի մատչելի[61] են եղել: Սակայն տարակարծիք են այդ ծեսի նշանակության հարցում: Ենթադրվում է. 1) ծածկելով գեմքը, աշխատում էին փրկել այն քայքայումից[62], 2) հանգուցյալի նկատմամբ ունեցած վախից[63], 3) դրանք կոչված էին հանգուցյալին մեկուսացնել մարդկանցից, 4) որպեսզի վերջիններս չվախենան, այնուհետև դրանք ծառայել են որպես չար ուժերից ու ոգիներից պաշտպանող թալիսմաններ[64]: Այսպիսով, ուղեկցող նյութերից և թաղման ծեսից դատելով, կարելի է ենթադրել, որ կավե սարկոֆագում թաղված կինը առանձնատան տիրոջ կինն է, որը կամ օտարերկրացի է եղել, որին թաղել են իր ազգային ծեսերին համապատասխան, կամ ազդեցության արդյունք է: Հնարավոր է, որ Հայաստանի վերնախավի որոշակի մաս ընդունել է թաղման այդ ծեսը:

Ուշագրավ են ապակե սրվակները: Դրանցից առաջինը դեղնավուն թափանցիկ ապակուց ազատ փչելու եղանակով պատրաստված, գնդաձև իրանով երկկանթանի սրվակ է: Ձևավոր կանթերը վերին ծայրով ամրացված են վզի կենտրոնին, մյուսը հենված է ուսին: Գլանաձև վիզը բարձր չէ (4 սմ), պսակը դեպի դուրս է, հորիզոնական: Նման սրվակներ հայտնի են Գառնիից[65] (մի ուրիշը գտնվում է Պատմության պետական թանգարա-

---

губных прикрытиях и "траурном венце", погребаемых с покойником.— "Сообщения АН ГрузССР, т. XXVIII, 1962, с. 637, рис. 1.

[58] Ժ. Խաչատրյան. Ուշ հելլենիստական շրջանի եզակի դամբարան, էջ 60:

[59] Н. В. Пятышева. Նշվ. աշխ., էջ 30, ծանոթ. 7:

[60] В. М. Зубарь. Նշվ. աշխ., էջ 110:

[61] А. В. Орешников. Նշվ. աշխ., էջ 8; П. Н. Шуль ц. Мавзолей Неаполя Скифского. М., 1953, с. 63; В. М. Зубарь. Նշվ. աշխ., էջ 110–111:

[62] A. Rieth. Antike Coldmasken. Antike Welt, 1973, H. 1, S. 29-30; В. М. Зубарь. Նշվ. աշխ., էջ 111:

[63] Б. А. Литвинский. Древние кочевники "Крыши мира". М., 1972, с. 141.

[64] А. В. Орешников. Նշվ. աշխ., էջ 7-8, И. К. Фодор. К вопросу о погребальном обряде древних венгров.— В кн.: "Проблемы археологии и древней истории угров". М., 1972, с. 172; В. М. Зубарь. Նշվ. աշխ., էջ 111:

[65] Ж. Д. Хачатрян. Гарни V, Античный некрополь (результаты раскопок 1956-1972 гг.), Ереван, 1976, с. 69-70, рис. 24.

նում), Քարաձիից, Լիճքից[66], Աշնակից[67]. Վրաստանից. Մցխեթայից[68] և Ուրբնիսիից[69]: Դրանք նման են ապակու գույնով, հաստությամբ և չափերով, թեև տարբեր թվագրություն ունեն, սակայն ճիշտը Գառնիինն է՝ II–III դդ. սկիզբ: Երկրորդ սրվակից մանուշակագույն ապակուց պատրաստված պսակի մի բեկոր է մեզ հասել միայն, դա ևս նույն ժամանակաշրջանին է պատկանում: Արտաշատի, Գառնիի գնդաձև սրվակների պսակի ձևը բնորոշ է փոքրասիական համաժամանակյա խեցեղենին, որը խոսում է դրանց փոքրասիական ծագման մասին: Ինչ վերաբերում է կավե միկանթանի խոհանոցային գավաթին (նկ. 18), ապա այն իր ձևով և մշակումով բնորոշ է I–II դդ. խեցեղենին և հաճախ է հանդիպում Հայաստանի անտիկ դարաշրջանի հուշարձաններում:

Արծաթե հայելիից մեզ է հասել մի բեկոր, կանաչ ժանգով: Հայելիները առնչվում են արդուզարդի հետ, պաշտամունքային նշանակություն են ունեցել, կապված են եղել անդրշիրիմյան աշխարհի հետ և հաճախ են հանդիպում անտիկ դամբարաններում: Արտաշատի դամբարանի հայելին, հավանարար, եղել է օվալաձև և ունեցել է պոչ: Օվալաձև հայելի հայտնի է Գառնիի կարասային թաղումից[70](մ. թ. ա. II-I դդ.):

Օվալաձև հայելիներ հայտնաբերվել են Հյուսիսային Կովկասում[71], Կոյ-Կրիլգան-Կարայում[72]: Այդ ձևը բնորոշ է սարմատական մ. թ. ա. III դ. և մ.թ. առաջին դարերի հայելիներին[73]. հետագայում այն լայն տարածում է ստացել[74]:

Նորահայտ դամբարանը թվագրվում է մ. թ. ա. III դ. առաջին կեսով: Այն հարստացնում է մեր գիտելիքները Հայաստանի թաղման ձևերի ու ծեսերի վերաբերյալ:

---

[66] Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան. Հին Հայաստանի ապակին (I–IV դդ.), Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երևան, 1969, №3, №68–70:

[67] Р. В. Кинжалов. Ашнакский могильник.— "Труды Гос. Эрмитажа", т. V, Л., с. 54, рис. 2.

[68] Н. Н. Угрелидзе. Стекло в древней Грузии. Тбилиси, 1961, рис. 9.

[69] М. Н. Сагинашвили. Стеклянные сосуды Урбнисского могильника. Тбилиси, 1970, № 45.

[70] Ж. Д. Хачатрян. Гарни V. Античный некрополь. Ереван, 1976, с. 101.

[71] И. И. Гущина, Т. Б. Попова. Воздвиженский курган-памятник III тысячелетия I в. до н. э.— Ежегодник ГИМ, 1965-1966, М., 1970, с. 79, рис. 16_{14}.

[72] Кой-Крылган-Кала— Памятник культуры древнего Хорезма IV в. до н. э. — IV в. н. э.— "Труды Хорезмской археолого-этнографической экспедиции", V, 1967, с. 147, рис. 59_{1}.

[73] М. Хазанов. Генезис сарматских бронзовых зеркал.— "Советская археология", 1963, рис. 1_{18}, с. 58, 60; М. Г. Машкова. Памятники прихоровской культуры.— "Свод археологических источников", Д 1-10, М., 1963, с. 42-43, табл. 28 (отдел II типы 2 и 3).

[74] Гарни V, с. 101.

ОСТАТКИ МОНУМЕНТАЛЬНОГО СООРУЖЕНИЯ И ЗАХОРОНЕНИЯ С ИНТЕРЕСНЫМ РИТУАЛОМ В АРТАШАТЕ

ЖОРЕС ХАЧАТРЯН

Р е з ю м е

В ходе последних раскопок западной части Арташата в 70-100 м от реки Аракс по соседству с холмиком были открыты выполненные в один ряд опорные стены площадки. Строительным материалом служили известковые блоки различной величины, обработанные в технике рустовки и соединенные скобами в виде "ласточкиного хвоста". Строительная техника, обнаруженные строительные детали из камня и обожженой глины (торовидные и аттические базы, фрагменты зубчатых и гладких цилиндров, солены, калиптеры, кусок мозаики, дисковидные и квадратные кирпичи гипокауста, цилиндрические и прямоугольные трубы, прямоугольные кирпичи гипокауста со следами известкового раствора и т. д.), свидетельствуют о наличии общественных монументальных комплексов, возможно, храма, бани или бань эллинистического времени и первых веков н.э. В пользу этого говорит также высококачественная местная и импортная керамика. Предположительно, это был упомянутый у Мовсеса Хоренаци храм Арега-Михра-Аполлона-Гермеса-Тира, сооруженный за пределами города. Здесь находился мост Таперакан, который соединял ведущие из Арташата на юг, восток и запад торговые дороги. Нововыявленный памятник предоставляет богатый материал по истории, архитектуре, культуре, городской жизни Армении эллинистического и позднеантичного времени, а расположенные на холмах и равнине бани свидетельствуют о развитии коммунально-бытовых сооружений и высоком уровне городской культуры. На северной окраине села Лусакерт, в 20 м от урартского, а затем античного сооружения случайно было открыто захоронение в глиняном саркофаге. До нас дошли три ромбовидных пластины из золотой фольги, две золотые пластины в виде листьев сельдерея, кухонная одноручная глиняная чаша, фрагменты серебряного зеркала и двух стеклянных флаконов. Погребение датируется первой половиной III в. Судя по сопутствующему материалу и своеобразному погребальному ритуалу, можно предположить, что захороненная в саркофаге женщина являлась женой владельца богатого дома, была чужестранкой. Возможно также, что это был результат чужеземного влияния и определенная часть армянской знати приняла этот тип погребального ритуала. Нововыявленное захоронение в глиняном саркофаге пополняет наши знания о погребальных обрядах и ритуале древней Армении.

REMAINS OF THE MONUMENTAL BUILDING AND BURIAL WITH INTERESTING RITUAL FROM ARTASHAT

ZHORES KHACHATRYAN

S u m m a r y

During the last two seasons of excavations at Artashat foundations of the square were opened in shape of regular masonry made of limestone. The remains of this building were excavated in the west part of the city, in 70-100 m far from the bank of the river Araxes, near the slope of a low mound. Stone quadras of rustic masonry of different sizes had "swallow-tail" nests for fastening along with clamps. Technique and building details, made of stone and bricks, testify to the functioning of monumental communal complexes, perhaps either temple or baths of the Hellenistic time and the first centuries of our era: toroid as well as Attic bases and details of flutted shaft of columns, stone and ceramic tiles *(calipters)*, fragments of mosaic, round and quarter pilae of hypocaust system, cylindrical and quadrangular pipes and bricks of hypocaust with pieces of mortar. This data may be reinforced by sherds of high standard local and imported pottery. Probably that monumental building was a temple of Sun-Mithra-Appolo-Hermes-Tyr built out of the city by the road, attested by Movses Khorenatsi. A bridge of Taperacan might be located here, which connected trade roads stretched in different directions from Artashat – south, east and west. The newly-found monument represents rich material illustrating history, architecture, culture, civic life of the Hellenistic and Late Classical (Roman) epochs. As to baths built on the plain and mound, they show high standard of civic culture and well-developed communal-domestic conditions. Human remains in the ceramic sarcophagus were unearthed by chance in 20m from the Urartian – Classical building at the north edge of the modern village Lousakert. Three rhomboidal plates of gold foil, two gold plates like leaves of celery, one-handle kitchen pot, fragments of silver mirror and two glass scent bottles were excavated. The grave dates from the 3rd century A. D. Due to artifacts and original funeral ritual remains of rich houseowner's wife were buried there and perhaps she was a foreigner. But it should be result of foreign influence and definite part of the Armenian nobility, may be, adopted this type of funeral ritual. The newly-found ceramic sarcophagus burial enriches our knowledge on the funeral rite and rituals of the ancient Armenia.